ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. ապրիլի 26-27-ը Բելգրադ (Սերբիա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Անի Օբոսյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

2) Նազիկ Աբգարյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման համակարգի մենեջեր

2. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգրադ (Սերբիա), 2023թ. ապրիլի 26-27-ը

3. Հրավիրող կողմը

Սերբիայի հավատարմագրման մարմինը (Accreditation Body of Serbia) Եվրոպական հավատարմագրման համագործակցության (EA) հետ համատեղ:

4. **Գործուղման նպատակը** (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության (EA) Բազմակողմ ճանաչման համաձայնագրի խորհրդի (MAC) 48-րդ նիստին:

Եվրոպական հավատարմագրման կազմակերպության հետ ասոցացման համաձայնագրի պահանջներից է կազմակերպվող գիտաժողովներին ու աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը, որի արդյունքում պետք է ապահովվի հավատարմագրման ազգային մարմնի աշխատակիցների իրազեկությունը ոլորտում առկա միջազգային իրավիճակին:

5. Քննարկված թեմաները

Քննարկվել են՝

- 48-րդ նիստի օրակարգը,
- նախորդ՝ 47-րդ նիստի արձանագրությունը,
- MAC քարտուղարության հաշվետվությունը,
- Հունգարիայի, Կիպրոսի և Լիտվայի ազգային հավատարմագրման մարմինների գնահատման վերաբերյալ հաշվետվությունները,
- անդամ երկրների կողմից կատարված աշխատանքները, փաստաթղթերի փոփոխությունները, 2022թ իրականացված գործունեության արդյունքում ստացված բարելավումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ներկայացվել են.

- Նախորդ նիստի ժամանակ քննարկված ISO 20387 Requirements for Biobanking ստանդարտին համապատասխան գնահատման հայտերը և երկրների կողմից դրա կիրառման հետ կապված մանրամասներ:

- EA կողմից իրականացվող գնահատումների փորձը, գործող մեխանիզմի վերանայմանն ուղղված քայլերը, անհրաժեշտությունը, փոփոխության տեսլականը, գնահատումների մեջ ներգրավված փորձագետների իրազեկությունը:

- EA փաստաթղթերի մշակման և լրամշակման գործում MAC-ի դերը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են օրակարգով ներկայացված հարցերը, երկրների կողմից ներկայացվել են (իրենց իրավասության շրջանակներում) իրականացված աշխատանքները և առկա խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հավատարմագրման ազգային մարմինների ղեկավարները քվեարկել են մի շարք որոշումների կայացման, փաստաթղթերի ընդունման համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել պարբերաբար ուսումնասիրել ներկայացվող փաստաթղթերը, մասնակցել դրանց լրամշակմանը, գործունեությունն իրականացնել համաձայն ժամանակացույցով սահմանված միջոցառումների:

Ներկայացվել է 2024-2025թթ. գագաթաժողովների անցկացման նախնական ժամանակացույցը, հաստատվել են 2024թ-ին կայանալիք գագաթաժողովների անցկացման վայրերն ու ժամանակացույցը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է ապահովել գագաթաժողովներին մասնակցությունը՝ իրազեկ լինելու Եվրոպական հավատարմագրման համագործակցության (EA) շրջանակներում իրականացվող գործունեությանը, մասնակցել փաստաթղթերի մշակմանն ու հստակեցնել երկրների կողմից իրականցվող միջոցառումների պատասխանատուներին, ինչի արդյունքում կապահովվի հավատարմագրման գործընթացի շարունակաբար միջազգային պահանջներին համապատասխանությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Անի Օբոսյան 03.05.2023թ.

Նազիկ Աբգարյան 03.05.2023թ.